ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-21/1

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք. Երևան « 15 » մարտի 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Գագիկ Միրիջանյանի՝ մի կողմից, և «Ամինտաս Գրուպ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս ընկերության տնօրեն Ա. Թադևոսյանի՝ մյուս կողմից (միասին անվանվելով Կողմեր), համաձայն Կողմերի միջև 02.03.2021թ. կազմված արձանագրության՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պարբերաբար հանձնարարում է կատարել անշարժ գույքի, իսկ անրաժեշտության դեպքում նաև շարժական գույքի (այսուհետ՝ Օբյեկտ) գնահատում և դրա արդյունքների հիման վրա Պատվիրատուին տրամադրել գրավոր հաշվետվություն (եզրակացություն): Պայմանագրով պատվիրված բոլոր գնահատումները կատարվում են Պատվիրատուի և կատարողի միջև համաձայնեցված գնացուցակի համաձայն (այսուհետ՝ Հավելված № 1), որը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. **Պատվիրատուն իրավունք ունի՝.**

2.1.1. Կատարողից պահանջել ծառայությունը մատուցել Օբյեկտի և անհրաժեշտ նյութերի տրամադրման հաջորդ օրվանից սկսած՝ տասն օրվա ընթացքում:

2.1.2. Կատարողից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները:

2.2. **Պատվիրատուն պարտավոր է՝.**

2.2.1. Կատարողի միջնորդության դեպքում տրամադրել գնահատման կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ:

2.2.2. Վճարել ծառայությունների մատուցման արժեքը՝ համաձայն ներկայացված հաշիվ-անդորրագրի:

2.3. **Կատարողն իրավունք ունի՝.**

2.3.1. Հանձնարարությունը ստանալուց հետո Պատվիրատուից պահանջել տրամադրելու գնահատման համար անհրաժեշտ տեղեկություններ և ապահովել գնահատվող գույքի զննությունը:

2.3.2. Պահանջել կատարված ծախսերի փոխհատուցում:

2.4. **Կատարողը պարտավոր է՝.**

2.4.1. Ապահովել Պայմանագրի առարկային վերաբերվող տեղեկությունների գաղտնիությունը:

2.4.2. Գնահատման կատարումն իրականացնել անձամբ և միայն Պատվիրատուի հանձնարարությամբ ու օրենքով սահմանված կարգով, Պայմանագրի Հավելված 1-ով հաստատված սակագներով, որոնք կարող են փոփոխվել Կողմերի լրացուցիչ գրավոր համաձայնագրով: Գնացուցակը և համաձայնագրերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

2.4.3. Գնահատման նպատակով ապահովել Օբյեկտի զննումն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագետի մասնակցությունը՝ ոչ ուշ, քան համապատասխան Օբյեկտի

գնահատման համար նշանակված փորձաքննության որոշումն ստանալուց հետո 7-օրյա ժամկետում:

2.4.4. Գնահատում կատարել և եզրակացությունը տրամադրել Պատվիրատուին գնահատվող Օբյեկտի զննման և անհրաժեշտ նյութերի տրամադրման հաջորդ օրվանից հաշված՝ տասն օրվա ընթացքում:

2.4.5. Գնահատում կատարելու անհնարինության դեպքում համապատասխան տեղեկություն ուղարկել Պատվիրատուին եռօրյա ժամկետում:

3. Կատարման ժամկետները

3.1. Գնահատման կատարման ժամկետն որոշվում է Պայմանագրի 2.3.3 և 2.3.4 կետերով: Եթե այդ ժամկետն անբավարար է գնահատում կատարելու համար, ապա հանձնարարությունը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում Կատարողը պարտավոր է Պատվիրատուի հետ համաձայնեցնել գնահատման կատարման փաստացի ժամկետը:

3.2. Գնահատման կատարման ժամկետը սկսվում է օբյեկտը Կատարողի կողմից զննություն կատարելուն հաջորդող աշխատանքային օրվանից:

3.3. Գնահատման կատարումն ավարտելուն պես Կատարողը հեռախոսագրով հայտնում է Պատվիրատուին գնահատման կատարումն ավարտված լինելու փաստը:

3.4. Գնահատման համար անհրաժեշտ տեղեկություն տրամադրելու Կատարողի գրավոր պահանջի օրվանից մինչև Պատվիրատուի կողմից դրանց տրամադրելու օրն ընկած ժամանակամիջոցը գնահատման կատարման ժամկետի մեջ չի հաշվարկվում:

4. Պատվիրատուի հանձնարարության և Կատարողի եզրակացության ընդունման-հանձնման կարգը

4.1. Պատվիրատուն հանձնարարությունը Կատարողին է ուղարկում համապատասխան գրությամբ:

4.2. Կատարողը եզրակացությունը Պատվիրատուին է ուղարկում համապատասխան գրությամբ:

5. Մատուցված ծառայության հանձնման և ընդունման կարգը

5.1. Գնահատման արժեքի չափի վերաբերյալ Կատարողը Պատվիրատուին հայտնում է հաշիվ-ապրանքագիր լրացնելու միջոցով, որը Պատվիրատուին է ուղարկվում եզրակացության հետ միասին:

5.2. Յուրաքանչյուր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար Պատվիրատուն Կատարողին վճարում է մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 10-ը:

5.3. Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Պայմանագրի Հավելված № 2-ով սահմանված հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի Հավելված № 3-ով սահմանված վճարման ժամանակացույցով:

5.4. Կողմերի փոխհամաձայնությամբ Պատվիրատուն կարող է Կատարողին տրամադրել կանխավճար:

6. Պայմանագրի ուժի մեջ մտնելը և դադարելը

6.1. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մեկ տարի ժամկետով:

6.2. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մասին մյուս կողմին առնվազն քառասունհինգ օր առաջ տեղյակ պահելով:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

7.1. Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Այլ պայմաններ

8.1. Պայմանագիրը կարող է փոփոխվել Կողմերի համաձայնությամբ:
8.2. Պայմանագրով չնախատեսված դեպքերում իրենց պարտավորությունները չկատարելու համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
8.3. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի վավերապայմանները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	«Ամինտաս Գրուպ» ՍՊԸ
	Գտնվելու վայրը՝
0078, ք. Երևան, Հալաբյան 41ա	0005, ք. Երևան,
ՀՎՀՀ 01223338	Արցախի փողոց 23/6
	ՀՎՀՀ 00453413
Հ/Հ 900011288025	Հ/Հ 1930035607480100
Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Տնօրեն
_____Գ. Միրիջանյան	_____Ա. Թադևոսյան

Հավելված № 1
«15» մարտի 2021 թ. կնքված
№ ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-21/1 պայմանագրի

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

ԲՆԱԿԱՐԱՆ		
Հ/հ	Սենյակներ	Գին (ՀՀ դրամ)
1.	1.	10.000
2.	2.	12.000
3.	3 և ավելի	14.000
ԱՌԱՆՁՆԱՏՈՒՆ		
Հ/հ	Մակերես	Գին (ՀՀ դրամ)
1.	մինչև 200 ք.մ.	22.000
2.	201 ք.մ. և ավելի	28.000
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ		
Հ/հ	Մակերես	Գին (ՀՀ դրամ)
1.	Մինչև 1000 ք.մ.	27.000
2.	1001-2000 ք.մ.	35.000
3.	2001ք.մ. և ավելի	43.000
ՀՈՂԱՄԱՍԵՐ		
Հ/հ	Մակերես	Գին (ՀՀ դրամ)
1.	Մինչև 1500 ք.մ.	10.000
2.	1501-5000 ք.մ.	12.000
3.	5001 ք.մ. և ավելի	14.000
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ		
Հ/հ	Մակերես	Գին (ՀՀ դրամ)
1.	Մինչև 1500 ք.մ.	45.000
2.	1501-3000 ք.մ.	50.000
3.	3001 -5000 ք.մ.	58.000
4.	5001 ք.մ. և ավելի	58.000+յուր. 1000ք.մ.-ի համար 5 %

Հ/հ	ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔ	Քանակ (հատ)	Գին (ՀՀ դրամ)
1.	Տրանսպորտային միջոց/հաստոց	1-10	7.000
		11-100	6.000
2.	Սարքավորում, հանգույց	1	2.500
3.	Պահեստամասեր	1	400

Հ/հ	ՆՅՈՒԹԵՐ	Քանակ	Գին (ՀՀ դրամ)
1.	Չափման միավոր (Կգ, լիտր)	1 անվանում	4.000

Ցանկացած տեսակի գույքի գնահատման աշխատանքներն իրականացվում են 1-ից 7 աշխատանքային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

0078, ք. Երևան, Հալաբյան 41ա

ՀՎՀՀ 01223338

Հ/Հ 900011288025

Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

_____ Գ. Միրիջանյան

ԿԱՏԱՐՈՂ

«Ամինտաս Գրուպ» ՍՊԸ

Գտնվելու վայրը՝

0005, ք. Երևան,

Արցախի փողոց 23/6

ՀՎՀՀ 00453413

Հ/Հ 1930035607480100

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն

_____ Ա. Թադևոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ № 2
«15» մարտի 2021 թ. կնքված
№ ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-21/1 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» _____ 201 թ.
Պայմանագրի անվանումը՝ Գնահատման ծառայությունների մատուցման պայմանագիր
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «15» մարտ 2021թ.
Պայմանագրի համարը՝ № ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-21/1
Պատվիրատուն՝ ի դեմս՝ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի և Կատարողը՝ ի դեմս ընկերության տնօրենի, հիմք ընդունելով, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են Պայմանագրին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «__» _____ 202__թ-ից «__» _____ 202_ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

Մատուցված Ծառայության անվանումը	Մատուցված ծառայության քանակական ցուցանիշը	Ծառայությունների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի)
Գույքի գնահատում				
Ընդամենը				

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
Ազգանուն, Անուն

Կ.Տ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

0078, ք. Երևան, Հալաբյան 41ա

ՀՎՀՀ 01223338

Հ/Հ 900011288025

Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

_____ Գ. Միրիջանյան

ԿԱՏԱՐՈՂ

«Ամինտաս Գրուպ» ՍՊԸ

Գտնվելու վայրը՝

0005, ք. Երևան,

Արցախի փողոց 23/6

ՀՎՀՀ 00453413

Հ/Հ 1930035607480100

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն

_____ Ա. Թադևոսյան

ՀԱՎԵԼՎԱԾ № 3
«15» մարտի 2021 թ. կնքված
№ ՀԿԱԾ-ԱՄԳ/ԱԳԳԾ-21/1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

Հ/Հ	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2021թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝										
		Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	2021թ.
1	Գույքի գնահատման ծառայություն	20%	30%	40%	50%	60%	70%	80%	90%	100%	100%	100%

* Աճողական %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն

0078, ք. Երևան, Հալաբյան 41ա

ՀՎՀՀ 01223338

Հ/Հ 900011288025

Կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն

_____ Գ. Միրիջանյան

ԿԱՏԱՐՈՂ

«Ամինտաս Գրուպ» ՍՊԸ

Գտնվելու վայրը՝

0005, ք. Երևան,

Արցախի փողոց 23/6

ՀՎՀՀ 00453413

Հ/Հ 1930035607480100

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ

Տնօրեն

_____ Ա. Թադևոսյան